

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Էջմիածին (քանապու) Յ. Յովհ. —

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ

- 2. Եղեմե Շոնեմսթրոմ . . . Կ. Վարդ. . . . 475
- 3. Կենդանութեան Մոնիթ. . . Կ. Կոստանեն . . . 477
- 4. Բեռլի Մեդիկալնոմ . . . Կ. Վ. 482
- 5. Եգեղեմեյան Բարոնոս 489
- 6. Գեներալ Բոնի . . . Կ. Վ. 494

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԵՏԱԿԱՆ

- 7. Մ. Էջմիածին Էմե Շոնեմսթրոմ ՏԵՂԵՐՈՒՄ . . . Ն. Բարաման . . . 494
- 8. Մոսկով Սոբորնոստի Մեդ. Ն. Բ. 202
- 9. Պոլիտեխնիկ Մեդ. (Շիլլեր) Յ. Յովհան . . . 205
- 10. Նորմալիս Մեդիկալնոմ ՄԵԴԻԿԱԿԱՆ ՄԵԴԻԿԱԿԱՆ ՄԵԴԻԿԱԿԱՆ ՄԵԴԻԿԱԿԱՆ . . . 204
- 11. ՏՈՐՈՆՈՍ ՏԵՄՈՍ . Մ. Բերեքեան . . . 206

ԲԱՆԱԿԱՆ — ՄԱՆԱԿԱՆ

- 12. Շոնեմս Նի ԴՈՎԱՆ . Մ. Հայկունի . . . 210
- 13. ՄԵՆԱԿԱՆ 215

ԱՂԵՐՅԱՆ

- 14. Մ. Էջմիածին 1600-ԱՄԵՐԵ ԵՐԵՄԵԱՆ Կ. Բ. 245
- 15. Եգեղեմեյան ԷՄԵՐԵԱՆ ԷՄԵՐԵ . . . 416
- ՆՈՐՄԱԿԱՆ
- ՄԵԴԻԿԱԿԱՆ
- 1. ՈՐՈՆՈՍ
- Շոնեմսի թեմ
- Մոսկովի եւ Նիմեյսի թեմ
- Բեռլինի թեմ
- 2. ՏԵՄԵԱՆ
- 3. ՊԵՏԱԿԱՆ
- Ատրապատիկի թեմ (Թեմակոմիթի) Ա.
- ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱՆ
- ՄԻ. ԲԱՆԱԿԱՆ . . . Կ. Վ.
- ՄԵՆԱԿԱՆ
- ՇՈՆԵՄՍԹՐՈՄ
- 1. Մ. Էջմիածին պատկեր
- 2. Մ. Էջմիածին շարժան
- 3. Ժամանակի Գ. Ժամանակ

ՄԻ ԲԱՆԱԿԱՆ

Արարատի աղբիլ ամսի համարում հրատարակելով Խորենացու պատմութեան մի հատուած՝ ես բաւական համարեցի յիշել միայն, թէ Սոկրատի հայերէն թարգմանութիւնը, որի հետ այդ հատուածը համեմատել անհրաժեշտ էր, մամուլի տակ է Արժ. Մեսրոպ վարդապետի հրատարակութեամբ և թէ նորան վերաբերեալ խնդիրները եւ մասնատրատէս յորենացու շնորհակցած աղբիլները պարզելու համար այդ հրատարակութեան սպասել պէտք է: Համեմատութեան համար ես կարող էի մեր մատենագրարանի ձեռագիրները դորձ զննել բայց իմանալով

որ իմ ցանկացած մասը արդէն տպագրուել է, ես աւելի յարմար համարեցի Հայր Մեսրոպի թղթաւթիւն խնդրել տպագրի հետ համեմատելու: Թէ այնտեղ ծանօթութիւններ ևս կան, որոնցից ես օգուտ քաղել կարող էի, յայտնի չէր ինձ. ես միայն պարզ բնագրին պէտք ունէի: Բայց որովհետեւ Հայր Մեսրոպ յայտնի դժկամակութեամբ ընդունեց իմ խնդիրը և ես համեմատութիւնը կատարելուց յետոյ չէի կարծում, թէ մի բան վերցրած ունենամ, որ նորա սեփականութիւնը լինէր և որ լոկ ձեռագիրը դորձ զննելով ինքս չնկատէի՝ կամեցայ որքան կարելի է զգոյշ լինել ուրիշի կիսատ գործի մէջ խառնուելուց և դժգոհութեան առիթ տալուց: ուստի և յատկապէս չյիշեցի, թէ իմ ինկատի ունեցած օրինակը Հայր Մեսրոպի հրատարակութիւնն է, որ մամուլի տակ լինելով փոփոխութիւնների ենթարկուել ևս կարող է: Գուցէ իմ այս վարմունքը մի սխալ էր, և ես պատրաստ կլինէի ամեն միջոցներով քաւել այդ սխալը: հրապարակաւ ներողութիւն խնդրել Արժ. Նորից, ի լուր աշխարհի յայտնել նորանից առաձայն եթէ նա անձամբ կամ Արարատին հաղորդած մի ակնարկով յայտնէր իւր դժգոհութիւնը, մի բան, որից կրկնում եմ, աշխատել եմ միայն խոյս տալ: Սակայն նա դորա փոխարէն անարգական դարձուածներով լի մի ըողոք է հրատարակել Մշակի № 58-ում: Իրաւունք չհամարելով ինձ Արարատը վէճերի և անձնական հաշիւների տպարէզ դարձնել՝ ես այդ յօդուածին արժանապայել պատասխանը չեմ տալ. առհասարակ անտանելի է ինձ մեր ժամանակի ամենատեղեկ երեւոյթներից մէկը՝ հրապարակային կռիւ հոգեւորականների, Մայր Աթոռի միաբանների մէջ: Ինքն ըստ ինքեան տեղեկ բան է, որ մարդ հրապարակի վերայ ևս զուտ ուսումնական խնդիրներում, իւր կրքերը սանձել չկարողանայ, աւելի տեղեկ է, երբ այդ անողը մի վարդապետ է: Հայր Մեսրոպը շատ լաւ գիտէ, թէ իւր անտեղի սրախօսութիւնները իմ Գերմանիայում ընդունած գիտնական տիտղոսների նկատմամբ ինչպիսի պատասխան պէտք է զանելին բուն գերմանական ուսանողի կողմից, և պէտք է այն հանգամանքից չօգտուել, որ ես հոգեւորական եմ և Ս. Էջմիածնի միաբան: Գոնէ իրաւունք պէտք է համարէ նա իմ կողմից պահանջելու, որ հրապարակաւ ցոյց տայ, թէ ես միաբանի ո՞ր հրատարակութիւններից եմ օգտուել շարունակ իմ ղիսերտացեալի մէջ, առանց հրատարակչին յիշելու: Իսկ ինչ վերաբերում է նորա մեղադրանքին, ինչպէս

էիք դուք ձեզ թող տայիս իմ ծանօթութիւններից յօգուած հիւսելու: քանի որ դուք նրանց մէջ յիշածներից աւելի բան չունէիք ասելու:—Խնդրում եմ այս հարցով հետաքրքրուողներին Սոկրատի լոյս տեսնելուց յետոյ ստուգել անձամբ թէ որքան իրաւագի է այդ: Մեր ի նկատի ունեցած նիւթին վերաբերեալ միայն մի ծանօթութիւն կայ այնտեղ: որ և ամբողջապէս մէջ եմ բերում. «Սոկրատի պատմութեան այս կտորը շատ հետաքրքրական է Մ. Խորենացու պատմութեան համար: մանրամասնութիւնը յառաջարանի մէջ է. ըստ սովորութեան կտորներն ենք դնում իրար հանդէպ գիւրութեամբ բաղդատելու համար: Այնքան է համառօտ Սոկրատի նմանութիւնը Խորենացու հետ: Մ. Խոր. Բ. 22»: Ապա զայիս է Խորենացու պատմութեան համապատասխան կտորը ուր ընդգծուած են կին ումն և քաղաքն նախազար բառերը: Իսկ համառօտ Սոկրատից փակադծի մէջ են առնուած այն խօսքերը որոնք ընդարձակի մէջ չկան. ուրիշ ոչինչ:—Արդ, Սոկրատի պատմութեան այս կտորի հետաքրքրական լինելը ես Կարիէրի գրքոյից գիտէի: Իսկ եթէ համառօտ Սոկրատի նմանութիւնը Խորենացու հետ ակներեւ է, չգիտեմ ինչու այդ ակներեւը առանց վերելի ծանօթութեան ինքս պիտի չնկատէի: Ասացէք խնդրեմ որ փոքր ի շատե խեղահաս դարոցականի առաջ երկու նման հատուածներ դնես և նա նոցա մէջ եղած նրմանութիւններն ու տարբերութիւնները որոշել չկարողանայ: Զարմանային այն է, որ Հայր Մեսրոբի ենթադրութեամբ ես այդ նմանութիւններից անպատճառ պիտի հետեցնէի թէ «Սոկրատի ընդարձակից համառօտողը, ոչ թարգմանողն է իրանից յաւելուածներ արել և հետեւապէս չէ կարող Խորենացու աղբիւր լինել»: Խոստովանում եմ որ այդ եզրակացութիւնների անհրաժեշտութիւնը պիտի էլ պարզ չէ ինձ համար: Ինչու Սոկրատի համառօտողը իրանից յաւելուածներ արած լինելով՝ Խորենացու աղբիւր լինել չէ կարող, եթէ վերջինս Կարիէրի կարծիքի համաձայն Բ. դարու մտտեւագիր է՝ դժուար է արդարեւ բերնել:—Պէտք է առհասարակ նկատեմ որ ես ամենեւին յաւակնութիւն չունիմ «Արարատ»-ի մէջ տպուած իմ յօդուածներին այնպիսի մի առանձին գիտնական արժէք վերադրելու, որպիսին Հայր Մեսրոբ իւր ծանօթութիւններին է վերագրում: Համառօտ տեղեկութիւններ կցելով իմ հրատարակած հատուածներին՝ ես կամենում եմ միայն «Արարատի» ընթերցողների համար պարզել թէ ինչ

չու է տպուում այդ հատուածը և թէ ինչ արժէք ունի նա: Այնուամենայնիւ իմ վեճի առարկայ յօդուածի մէջ նոր բան կայ և այդ նորութիւնը ես Հայր Մեսրոբի ծանօթութիւններից առնել չէի կարող*: Ընթերցողը թող կրկին անգամ կարգայ իմ յօդուածը և համոզուի: «Խորենացու այն պատմութիւնը որին պատկանել է հատուածը, Արաց դարձի համար մի հայկական աղբիւր է միայն ունեցել և Սոկրատից բոլորովին չէ օգտուել: Իսկ Խորենացու մեզ հասած պատմութեան խրմբայիրը հաւանականաբար նորանից ևս տեղեկութիւններ առել է, բայց ոչ անպատճառ: Ի. դարու վերջում արուած թարգմանութիւնից, այլ Բ. դարում գրած բնագրից», այս և սոցա նմա նախադասութիւններ գուցէ կրկին մի օր Սոկրատի յառաջարանում ծանօթութիւնների մէջ նոքա չկային և լինել չէին կարող: Թող Հայր Մեսրոբը նոյնպէս նեղութիւն կրէ կրկին իմ յօդուածը կարգաւոր և այնպիսի անհեթեթ բաներ չպնդէ, որպէս թէ ես ասած լինիմ: «Խորենացին օգտուել է համառօտ Սոկրատից»: 2^է որ ես դորա բոլորովին հակառակն եմ հաստատել կամենում: Իսկ թէ հայերէն լեզուով երկու Սոկրատ կայ ասել նոյն է, ինչ որ իրեն մի գիւտ վերագրել, չգիտեմ ինչից է հետեւում: գոնէ ես կարծում էի թէ իմ գրուածքի թելը պահելու համար մի անհրաժեշտ նախադասութիւն եմ գործածել միայն:—Ուրախ եմ վերջապէս, Հայր Մեսրոբ, որ իմ հոգեւորաբաւ քարոզները այդպէս ուշադրութեամբ կարդում էք. Չեր ասած խօսքերի մէջ որ և է անհատի պատկեր չկայ գրած, այլ իրերի մի ցաւայի գրութիւն, որին միարան ուժով դէմ դնելու հրաւիրում եմ Չեզ կրկին ամենայն անկեղծութեամբ: Ինքներդ դատեցէք. Ինչպէս պէտք է վարուէր Չեզ հետ Ս. Իշմիաճնի ամէն մի նախանձախընդիր միարան—թէկուզ հէնց Չեր ամիսներ առաջ օտար թերթերում լոյս տեսած յայտնի հեռագրի համար, եթէ նա լոկ միայն արգարութեան ձայնին լսել կամենար:

Ն. Ն.



* 2^է որ նոյն ինչոյով ես զբաղուել էի ուղիղ մի տարի առաջ Արարատի մայիս ամսի համար Խորենացու մի ուրիշ հատուած հրատարակելով: Միթէ այն ժամանակ ես Հայր Մեսրոբի ծանօթութիւններից օգտուեցայ: